

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ  
 ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**







**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**

**Բաց Բաժնետիրական Ընկերություն**

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am  
 Հաշվետվություն թիվ 66, 16.05. 2013թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,277,501 հատ,	25,000 հատ	40.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սրույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

ստորագրող անձինք՝			
<b>Չարուհի Մելքոնյան</b>	<b>Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ</b>		<b>16.05.13</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Արա Ախոյան</b>	<b>Վարչության անդամ, Ռազմավարության և բիզնեսի զարգացման վարչության պետ</b>		<b>16.05.13</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Սուրեն Կարապետյան</b>	<b>Վարչության անդամ, Տարածքային ստորաբաժանումների գործունեության կոորդինացման վարչության պետ</b>		<b>16.05.13</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Տիգրան Գալստյան</b>	<b>Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ</b>		<b>16.05.13</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Նշան Գրիգորյան</b>	<b>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ</b>		<b>16.05.13</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<b>Դավիթ Հարությունյան</b>	<b>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ</b>		<b>16.05.13</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

<b>Աշոտ Օսիպյան</b>	<b>Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն</b>		<b>16.05.13</b>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)



16 մայիսի 2013 թ.

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման  
և տեղաբաշխման մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2013 թվականի մայիսի 13-  
ի թիվ 14/03Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ԳՅ, ք. Երևան, Պուշկինի 19 Գեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

« 13 » մայիսի 2013թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 14/03L

### ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21<sup>6</sup>-ի 1-ին մասի ժգ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1. կետի ժը) ենթակետը, ինչպես քննարկելով Հայաստանի Հանրապետությունում գործող առևտրային բանկերի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծությունը՝ Բանկի Խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Թողարկել պարտատոմսեր 400,000,000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 40,000 (քառասուն հազար) հատ, 36 (երեսունվեց) ամիս մարման ժամկետով, տարեկան 13 (տասներեք) տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, արժեկտրոնային պարտատոմսեր:

2. Տեղաբաշխումն իրականացնել անվանական արժեքով բաց բաժանորդագրությամբ՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Տեղաբաշխումը սկսել սույն թվականի հուլիսի 1-ին՝ ժամը 09:00-ին և ավարտել հուլիսի 19-ին՝ ժամը 16:00-ին:

3. Մինչև սույն որոշման 2-րդ կետում նշված ժամկետի ավարտը բաժանորդագրության ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու և հետ կանչվող հայտերի բացակայության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

4. Սահմանել, որ պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

5. Արժեկտրոնային եկամտի գումարը վճարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:

